

ՀՀ ԼՈՌ ՈՒ ՄԱՐԶ



ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
 Մարզկենտրոնը՝ ք. Վանաձոր



Տարածքը	3789 քառ. կմ
Գյուղատնտեսական հողատեսքեր	192212 հա
այդ թվում՝ վարելահողեր	47823 հա
Քաղաքային համայնքներ	8
Գյուղական համայնքներ	105
Գյուղական բնակավայրեր	122
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	284.5 հազ. մարդ
այդ թվում՝ քաղաքային	167.9 հազ. մարդ
գյուղական	116.6 հազ. մարդ

ՀՀ Լոռու մարզը տարածքի մեծությամբ երրորդն է հանրապետությունում (գրադեցնում է ՀՀ տարածքի 12.7 %-ը), բնակչության թվաքանակով՝ երկրորդը (ք.Երևանից հետո): Գտնվում է հանրապետության հյուսիսում, սահմանակից է Վրաստանին: Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է ՀՀ գլխավոր երկաթուղին:

ՀՀ Լոռու մարզն ընդգրկում է Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի, Թումանյանի, Գուգարքի տարածաշրջանները, Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի, Տաշիր, Ախթալա, Թումանյան, Շամլուղ քաղաքները: Մարզի բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակի 8.9 %-ը: Բնակչության գրեթե 59 %-ը քաղաքաբնակ է:

Լոռու մարզի տարածքը գրադեցնում է պատմական Հայաստանի Գուգարք նահանգի արևելյան կեսը (այս տարածքում X-XI դարերում գոյություն է ունեցել հայկական անկախ պետություն՝ Լոռու թագավորությունը, մարզի տարածքի մի մասը հանդիսացել է Զաքարյանների տոհմական կալվածքը):

Մարզում ծովի մակերևույթից բարձրագույն կետը Թեժ լեռան գագաթն է (3101մ), ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը (մոտ 390 մ):

Բազմաբնույթ են տարբեր դարերից ժառանգած ճարտարապետական հուշարձանները: Պետական պահպանության տակ են գտնվում մոտ 3000 հուշարձաններ: Առանձնապես ուշագրավ են Սանահինի ու Հաղպատի համալիրները, Օձունի վանքային

համալիրը, Ախթալայի վանքային համալիրն ու բերդը, Լոռի բերդի և Տաշիրի բերդի ավերակները, Սպիտակի քարայր-կացարանները և պղնձեդարյան բնակատեղին, Վանաձորի V դարի վանքերը, Թագավորանիստ բնակատեղի ամրոցը, կիկլոպյան 2 ամրոցների մնացորդները, Քոսի ճոթեր պղնձեդարյան բնակատեղին, Դսեղի ս. Գրիգոր Բարձրաքաշ վանքը և այլն:

Սանահինի վանքը (ըստ Հ. Աճառյանի, վերծանվում է որպես Սան–հին՝ «հին կարաս» անվամբ) հայ միջնադարյան ճարտարապետության աչքի ընկնող համակառույցներից է և նշանակալի դեր է կատարել հայ հոգևոր ու մշակութային կյանքում: 1000-ամյա պատմություն ունեցող այս վանքում հայ դպրության գործին իրենց հարուստ գիտելիքներն են ի սպաս դրել մշակութային և կրոնական նշանավոր գործիչներ Դիոսկորոս կաթողիկոսը, Անանիա, Հակոբ և Հովհաննես Սանահնեցիները, Գր.Տաթևորդին, մագիստրոս Գր. Պահլավունին: Հոգևոր դպրոցի սաներից է եղել մեծ երգիչ Սայաթ Նովան:

Սանահինի վանքը, ինչպես նաև 6 կմ հեռավորությամբ գտնվող *Հաղպատի վանքը* հիմնադրվել են X դարի I կեսին: *Հաղպատի վանքը* Հայաստանի խոշորագույն և նշանավոր վանքային համալիրներից է, որում առավել շեշտված ձևով են դրսևորված միջնադարի հայ ճարտարապետության առանձնահատուկ գծերը՝ գեղատեսիլություն, շրջապատող միջավայրի հետ ներդաշնակ կապ, աշխարհիկ մտածողություն և աշխարհիկ շինությունների գերակշռություն: Հուշարձանը բնության և մարդկային արարչագործության հազվագյուտ ներդաշնակություն է: Վանքը հայտնի է որպես հայ միջնադարյան հոգևոր և մշակութային կարևոր կենտրոններից մեկը, եղել է խոշոր վանական կալվածատիրական հաստատություն:

Հաղպատի վանքը XII դարի կեսերից հանդիսացել է Կյուրիկյան թագավորության թեմական կենտրոնը: Այդտեղ արգասաբեր գործունեություն են ծավալել գիտնական, մատենագիր Դավիթ Քոբայրեցին, բանաստեղծ Հ.Երզնկացի Ծործորեցին (Պլուզ), իրավագետ Դ.Ալավկու որդին և ուրիշներ: Այդտեղ է ընդօրինակվել Հաղպատի հռչակավոր ավետարանը (1211թ.): Հաղպատում կրոնավորել է մեծն Սայաթ Նովան:

1988թ. երկրաշարժը, որի էպիկենտրոնը գտնվում էր Սպիտակից փոքր – ինչ հյուսիս, ընդգրկել էր մարզի այժմյան տարածքի մեծ մասը: Երկրաշարժի հզորությունն ըստ Ռ-իխտերի սանդղակի, Սպիտակ քաղաքում կազմել է 9-10 բալ, Կիրովականում՝ 8: 40 վայրկյան տևած ցնցումները հողին հավասարեցրին Սպիտակի բոլոր շինությունները, Կիրովականում փուլ եկավ 8000 բնակարան, Ստեփանավանում՝ 30 շենք ու 2500 տուն, էապես տուժեցին Գուգարքի, Թումանյանի, Տաշիրի շրջանները:

Երկրաշարժից անմիջապես հետո, աշխարհի մի շարք պետությունների բազմաթիվ սրտացավ մարդկանց դրամական, նյութական ու ֆիզիկական օգնությամբ սկսված վերականգնողական աշխատանքները շարունակվում են մինչ օրս: Անցած 16 տարիների ընթացքում, մերթ դանդաղելով, մերթ աշխուժանալով, մարզում կառուցվել են նոր բնակարաններ, դպրոցներ, արտադրական շինություններ, մշակույթի օբյեկտներ:

ՀՀ Լոռու մարզի արդյունաբերության տեսակարար կշիռը 2003թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում կազմել է 4.4%, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում՝ 10.7%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 3.1% և բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 3.0 %:

2003թ. մարզում գործել են 98 արդյունաբերական, 14 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 1 ձկնորսության ու ձկնաբուծության, 36 շինարարական, 20 տրանսպորտային, 1 կապի, 3 ծառայություններ մատուցող, 1073 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 285 -ը խանութներ են, 752 -ը՝ կրպակներ, 28 -ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 4 -ը՝ գյուղատնտեսական արտադրանքի, 4 -ը՝ սպառողական ապրանքների շուկաներ: Գործել են նաև 169 պետական և 1 ոչ պետական հանրակրթական, 20 երաժշտական և արվեստի, 18 մարզական դպրոցներ, 8 պետական և 2 ոչ պետական միջին մասնագիտական հաստատություններ, 1 պետական և 6 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 53 պետական նախադպրոցական հիմնարկ, 122 գրադարան, 8 թանգարան, 1 հյուրանոց, 47 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 14 հիվանդանոց:

Մարզկենտրոնը **Վանաձոր** քաղաքն է (նախկինում՝ Մեծ Ղարաքիլիսա, 1935-92թթ.՝ Կիրովական): Գտնվում է Փամբակ և Բագում լեռնաշղթաների միջլեռնային գոգավորությունում, Տանձուտ և Փամբակ գետերի միախառնման վայրում, ծովի մակերևույթից 1350 մ բարձրության վրա: Հեռավորությունը Երևանից ավտոխճուղով 120 կմ է, երկաթուղով՝ 224 կմ: Քաղաքի միջով հոսում են Տանձուտ և Վանաձոր գետերը:

Հնագետների աշխատանքի շնորհիվ պարզվել է, որ Տաշիր-Չորագետի շրջանը և հատկապես Վանաձոր քաղաքի տարածքը հարուստ են մեծ ու փոքր հնագիտական հուշարձաններով (Թագավորանիստ, Մաշտոցի բլուր, Քոսի ճոթեր և այլն): Վանաձորի տարածքում գտնվող բնակավայրը մ.թ.ա. II դարում եղել է Մեծ Հայքի, իսկ մ.թ. X դարում՝ Կյուրիկյան թագավորության կազմի մեջ: Ենթադրվում է, որ Ղարաքիլիսա (Սև եկեղեցի) անունը թաթարական է, տրվել է XIII դարի սկզբներին՝ Վանաձորի հյուսիսային բլրի վրա գտնվող սև քարից կառուցված եկեղեցու անունով:

1801թ. Վրաստանի հետ Ռուսաստանին միացավ նաև Լոռին, և Ղարաքիլիսան դարձավ սահմանային գորակայան: 1849թ. Ղարաքիլիսան Երևանի նահանգի մեջ էր, 1870թ. Դիլիջան-Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ ճանապարհի, իսկ 1899թ.՝ Թիֆլիս-Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ երկաթուղու, կայարանի, փոստատան և իջևանատների կառուցումը մեծապես նպաստել է գյուղաքաղաքի ձևավորմանն ու զարգացմանը: 1935թ. Ղարաքիլիսան վերանվանվում է Կիրովական, իսկ 1992թ.-ից քաղաքը կոչվում է Վանաձոր:

Երբեմնի արդյունաբերական հզորություններով հարուստ ու միաժամանակ առողջարանային կենտրոն համարվող քաղաքն այսօր չի համապատասխանում իր անվանը նախկինում կցվող բնորոշումներին: Նախկինում խոշոր արդյունաբերական կազմակերպությունների մեծ մասը դեռ չի գործում, մանկական ճամբարներն ու հանգստյան վայրերը պարապուրդի են մատնված, հատված են քաղաքի շրջակա անտառները:

2004թ. հունվարի 1-ի դրությամբ **Վանաձորում** բնակվել է 106.1 հազ.մարդ, որը կազմել է մարզի քաղաքաբնակ բնակչության 63.2 %-ը: 2003թ. քաղաքում գործել են 52 արդյունաբերական կազմակերպություններ, որոնց թողարկած արտադրանքի ծավալը կազմել է մարզի 2003թ. ցուցանիշի մոտ 19.8 %-ը: Քաղաքում գործել է 722 մանրածախ առևտրի օբյեկտ (163 խանութներ, 542 կրպակներ, 12 հանրային սննդի օբյեկտներ, 1 գյուղատնտեսական արտադրանքի և 4 սպառողական ապրանքների շուկաներ), որոնց միջոցով իրականացված ապրանքաշրջանառությունը կազմել է մարզի ապրանքաշրջանառության 73.4%-ը: Քաղաքում գործել են 25 շինարարական, 8

տրանսպորտային, 1 կապի, 172 ծառայություններ մատուցող կազմակերպություններ, 34 հանրակրթական, 9 երաժշտական և արվեստի, 12 մարզական դպրոցներ, 21 նախադպրոցական, 4 պետական, 1 ոչ պետական միջին մասնագիտական և 1 պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 11 գրադարան, 3 թանգարան, 3 հիվանդանոց, 9 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հյուրանոց:

Մայիտակի տարածաշրջան

Վարելահողեր	11330 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	20
Գյուղական բնակավայրեր	20
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	41.6 հազ. մարդ
այդ թվում՝ քաղաքային	15.0 հազ. մարդ
գյուղական	26.6 հազ. մարդ

2003թ. տարածաշրջանում գործել են 7 արդյունաբերական, 2 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 3 շինարարական, 2 տրանսպորտային, 22 ծառայություններ մատուցող, 48 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 14-ը խանութներ են, 33-ը՝ կրպակներ, 1-ը՝ հանրային սննդի օբյեկտ:

Տարածաշրջանում գործել են 29 հանրակրթական, 2 երաժշտական ու արվեստի և 2 մարզական դպրոցներ, 2 նախադպրոցական հիմնարկ, 2 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 20 գրադարան, 2 հիվանդանոց և 6 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ:

2003թ. Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Մայիտակի տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 1.5%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 3.1 % և մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 8.6 %:

Մայիտակ քաղաքը (15.0 հազ. մարդ) գտնվում է Փամբակ գետի ափին, Երևանից 100 կմ, իսկ մարզկենտրոնից 20 կմ հեռավորության վրա: Ջրաղեցնում է 1400 հա տարածք: Քաղաքի ներկայիս տարածքում բնակավայրեր են եղել դեռևս մ.թ.ա. III հազարամյակից սկսած: Այդ են վկայում մինչ օրս պահպանված քարայր կացարանները և քաղաքի հարավային մասում գտնվող պղնձեդարյան բնակատեղու հետքերը:

Քաղաքի տարածքում տեղաբաշխված Համամլու բնակավայրի մասին հիշատակումներ կան 1800-ական թվականներից, 1961թ. բնակավայրն անվանակոչվել է Մայիտակ: Ամբողջությամբ ավերվել է 1988թ. աղետալի երկրաշարժից: Մայիտակը մինչ 1988թ.-ը հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր, Մայիտակում էր գտնվում Հայաստանի միակ շաքարի գործարանը:

2003թ. քաղաքում գործել են 4 արդյունաբերական, 3 շինարարական, 2 տրանսպորտային, 18 ծառայություններ մատուցող, 16 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ :

Քաղաքում 2003թ. գործել են նաև 7 հանրակրթական, 2 երաժշտական և արվեստի և 2 մարզական դպրոցներ, 2 նախադպրոցական հիմնարկ, 3 գրադարան, 1 հիվանդանոց և 5 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ:

2003թ.-ին շինարարական-վերականգնողական աշխատանքները Մայիտակում լայն թափով են ընթացել:

Ստեփանավանի տարածաշրջան

Վարելահողեր	10152 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	18
Գյուղական բնակավայրեր	19
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	33.4 հազ. մարդ
այդ թվում` քաղաքային	16.2 հազ. մարդ
գյուղական	17.2 հազ. մարդ

2003թ. տարածաշրջանում գործել են 8 արդյունաբերական, 4 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 5 շինարարական, 1 տրանսպորտային, 24 ծառայություններ մատուցող, 52 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 45-ը խանութներ են, 6 –ը` կրպակներ և 1-ը` գյուղարտադրանքի շուկա:

Տարածաշրջանում գործել են 25 հանրակրթական, 2 երաժշտական և արվեստի դպրոցներ, 6 նախադպրոցական հիմնարկ, 1 բարձրագույն ուսումնական հաստատություն, 2 թանգարան, 13 գրադարան, 1 հիվանդանոց և 10 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ:

2003թ. Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Ստեփանավանի տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 1.6 %, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ` 7.3 % և մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում` 7.3 %:

Ստեփանավան քաղաքի (16.6 հազ.բնակիչ) պարագիծը կազմում է 26.5 կմ և զբաղեցնում 1666 հա տարածք, գտնվում է ծովի մակերևույթից 1375 մ. բարձրության վրա: Քաղաքի տարածքը շարունակաբար եղել է բնակատեղի վաղ բրոնզեդարյան շրջանից, որի ապացույցն են հանդիսանում Լոռի բերդ-ի և Արմանիս գյուղի տարածքների վաղ բրոնզից մինչև ուշ բրոնզի դարաշրջանի բնակատեղիները և դամբարանադաշտերը: XVI-XVIII դարերում բնակատեղին կոչվել է Ջալալօղլի, իսկ 1930թ. քաղաքը վերանվանվել է Ստեփանավան:

2003թ. քաղաքում գործել են 6 արդյունաբերական, 5 շինարարական, 1 տրանսպորտային, 24 ծառայություններ մատուցող, 50 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 1-ը գյուղարտադրանքի շուկա է, 43-ը` խանութ, 6-ը` կրպակ:

Քաղաքում 2003թ. գործել են նաև 7 հանրակրթական, 2 երաժշտական և արվեստի դպրոցներ, 4 նախադպրոցական հիմնարկ, 1 բարձրագույն ուսումնական հաստատություն, 1 թանգարան, 3 գրադարան, 3 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց:

Տաշիրի տարածաշրջան

Վարելահողեր	12436 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	19
Գյուղական բնակավայրեր	23
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	27.3 հազ. մարդ
այդ թվում` քաղաքային	9.2 հազ. մարդ
գյուղական	18.1 հազ. մարդ

2003թ. **տարածաշրջանում** գործել են 10 արդյունաբերական, 2 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 1 ձկնորսության ու ձկնաբուծության, 2 տրանսպորտային, 20 ծառայություններ մատուցող, 26 մանրածախ առևտրի կազմակերպություններ, որոնցից 8-ը խանութներ են, 16-ը՝ կրպակներ, 1 -ը՝ հանրային սննդի օբյեկտ և 1-ը՝ գյուղարտադրանքի շուկա: Տարածաշրջանում գործել են նաև 20 հանրակրթական և 1 մարզական դպրոցներ, 4 նախադպրոցական հիմնարկ, 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 19 գրադարան, 2 հիվանդանոց և 3 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ:

2003 թ. Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Տաշիրի տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 2.4%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 1.9 % և մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 1.4 %:

Տաշիր քաղաքի (9.2 հազ.մարդ) այժմյան տարածքում գոյություն են ունեցել հայկական բնակատեղիներ դեռևս մ.թ.ա. III հազարամյակից: Պահպանված են բազմաթիվ բնակատեղիներ հատկապես Ձորագետ գետի ձախ ափին: Նշանավոր է Տաշիր բերդը, որը կառուցվել է մ.թ.ա. II հազարամյակի վերջում, բերդաքաղաքը հանդիսացել է Գուգարաց բղեշխության Տաշիր նահանգի կենտրոնը: Պատմության մեջ հայտնի է Տաշիրի մեծ իշխան Վրեն Տաշիրեցին, որը մասնակցել է 451թ. Ավարայրի ճակատամարտին:

Ներկայիս Տաշիր քաղաքը հիմնադրվել է 1834թ., որպես ռուսական արքայազնի և կոչվել է Վորոնցովկա, հիմնականում ապրել են ռուսներ: 1937թ. վերանվանվել է Կալինինո և ընդգրկվել Ստեփանավանի շրջանի կազմում, 1961թ. առանձնացել է որպես քաղաքատիպ ավան, 1983թ.՝ հանրապետական ենթակայության քաղաք: Տաշիր վերանվանվել է 1991թ.:

2003թ. քաղաքում գործել են 7 արդյունաբերական (սննդամթերքի արտադրություն, մասնավորապես՝ պանրի), 2 տրանսպորտային, 19 ծառայություններ մատուցող, 26 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 1-ը հանրային սննդի օբյեկտ է և 1-ը՝ գյուղարտադրանքի շուկա, 8-ը՝ խանութ, 16-ը՝ կրպակ: Քաղաքում գործել են նաև 3 հանրակրթական և 1 մարզական դպրոցներ, 4 նախադպրոցական հիմնարկ, 2 գրադարան, 3 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 1 հիվանդանոց:

Թունանյանի տարածաշրջան

Վարելահողեր	7903 հա
Քաղաքային համայնքներ	4
Գյուղական համայնքներ	27
Գյուղական բնակավայրեր	34
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	48.7 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	21.4 հազ. մարդ
գյուղական	27.3 հազ. մարդ

2003թ. **տարածաշրջանում** գործել են 14 արդյունաբերական, 3 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 5 տրանսպորտային, 67 ծառայություններ մատուցող, 176 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ են, որոնցից 28-ը՝ խանութներ, 142-ը՝ կրպակներ, 5 հանրային սննդի օբյեկտներ, 1 գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ: Տարածաշրջանում գործել են նաև 42 հանրակրթական, 8 երաժշտական և արվեստի, 2

մարզական դպրոցներ, 16 նախադպրոցական հիմնարկ, 2 միջին մասնագիտական և 1 բարձրագույն ուսումնական հաստատություններ, 3 թանգարան, 39 գրադարան, 13 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 4 հիվանդանոց:

2003թ. Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Թումանյանի տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 70.1 %, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 9.6 % և ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 10.9 %:

Ալավերդի քաղաքը (17.0 հազ.մարդ) գտնվում է Դեբեդ գետի ափին (Երևանից 167 կմ հեռավորության վրա): Ալավերդու պղնձի հանքավայրերն օգտագործվել են դեռևս պղնձի դարաշրջանում, XVIII դարի վերջերին ֆրանսիացիներն այստեղ կառուցել են առաջին պղնձաձուլական գործարանը: Քաղաքը ձևավորվել է գործարանի կառուցումից հետո: Պղնձաձուլական արտադրությունը գործում է նաև այսօր, որի արտադրանքը կազմել է Լոռու մարզի ցուցանիշների ծանրակշիռ մասը:

2003թ. քաղաքում գործել են 5 արդյունաբերական, 5 տրանսպորտային, 40 ծառայություններ մատուցող, 109 մանրածախ առևտրի կազմակերպություններ, որոնցից 20-ը խանութներ են, 86-ը՝ կրպակներ, 2-ը՝ հասարակական սննդի օբյեկտներ, 1-ը՝ գյուղմթերքների շուկա: Ալավերդի քաղաքում գործել են նաև 10 հանրակրթական, 3 երաժշտության, արվեստի և 1 մարզական դպրոցներ, 12 նախադպրոցական հիմնարկ, 1 պետական և 1 ոչ պետական միջին մասնագիտական և 1 բարձրագույն ուսումնական հաստատություններ, 1 թանգարան, 7 գրադարան, 2 հիվանդանոց, 1 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հյուրանոց:

Ախթալա քաղաքը (2.5 հազ.մարդ) գտնվում է Դեբեդի ձախ ափին (Երևանից 185 կմ հեռավորության վրա), լեռնային դարավանդի վրա: Քաղաքի այժմյան տարածքում բնակատեղիներ գոյություն են ունեցել դեռ վաղնջական ժամանակներից: Ուշ բրոնզի դարաշրջանի դամբարաններն առաջիններից մեկը պեղել է հայտնի հնագետ Ժակ Դը Մորգանը՝ XIX դարում: Մատուռներ և վանքեր կառուցվել են IV դարից սկսած, որոնց մեծ մասը պահպանվում է: Հուշարձանային համալիրի զարդը վերականգնվող Ախթալայի հայտնի վանքն է, որը կառուցվել է հին վանքի տեղում՝ X դարից հետո: Պահպանված է նաև բերդապարսպի մուտքի մասը՝ երկաթգծից 50 մ-ի վրա:

2003թ. քաղաքում գործել է 2 արդյունաբերական (պղնձի խտանյութի արտադրություն), 4 ծառայություններ մատուցող կազմակերպություն: Քաղաքում գործել են նաև 2 հանրակրթական դպրոց, 2 նախադպրոցական հիմնարկ և 1 գրադարան:

Թումանյան քաղաքը (2.0 հազ.մարդ) գտնվում է Դեբեդի աջ ափին (Երևանից 152 կմ հեռավորության վրա): Քաղաքի տարածքի հնագույն ժամանակներից բնակեցված լինելու մասին վկայում են բազում մատուռներն ու վանքերը: Հատկապես հայտնի է Քոբայր վանքային համալիրը՝ կառուցված VIII դարում:

Հետպատերազմյան շրջանում տեղական հումքի բազայի կառուցվել է հրակայուն աղյուսի գործարան, որի շուրջն էլ ձևավորվել է ներկայիս Թումանյան քաղաքը:

Քաղաքում 2003թ. գործել են 1 արդյունաբերական, 4 ծառայություններ մատուցող և 12 առևտրի կազմակերպություններ, 1 հանրակրթական և 1 մարզական դպրոցներ, 1 նախադպրոցական հիմնարկ, 1 թանգարան, 1 գրադարան և 1 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ:

Շամլուղ քաղաքը (0.8 հազ.մարդ) գտնվում է Գեբեղ գետի ձախ ափին (Երևանից 203 կմ հեռավորության վրա): Տարածքի հուշարձանները վկայում են տարածքի վաղ շրջանում բնակեցված լինելու մասին: Հայտնի է իր պղնձի, արծաթի հանքավայրերով: XVI դարից հետո դարձել է հանքաշահագործման կարևորագույն կենտրոններից մեկը Հարավային Կովկասում: 2003թ. քաղաքում գործել է 2 ծառայություններ մատուցող և 6 մանրածախ առևտրի կազմակերպություն, 1 հանրակրթական դպրոց, 1 նախադպրոցական հիմնարկ և 1 գրադարան:

Գուգարքի տարածաշրջան

Վարելահողեր	4201 հա
Քաղաքային համայնքներ	-
Գյուղական համայնքներ	21
Գյուղական բնակավայրեր	26
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	27.4 հազ. մարդ
այդ թվում՝ քաղաքային	-
գյուղական	27.4 հազ. մարդ

2003թ. **տարածաշրջանում** գործել են 7 արդյունաբերական, 2 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 3 շինարարական, 2 տրանսպորտային, 24 ծառայություններ մատուցող, 49 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 27-ը խանութներ են, 13-ը՝ կրպակներ, 9-ը՝ հանրային սննդի օբյեկտ:

Տարածաշրջանում գործել են 19 հանրակրթական, 2 երաժշտական ու արվեստի 1 մարզական դպրոցներ, 4 նախադպրոցական հիմնարկ, 20 գրադարան և 6 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ: Տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը մեծամասամբ պայմանավորված է Վանաձոր քաղաքին մոտ լինելու հանգամանքով:

2003թ. Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Գուգարքի տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 4.6%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 4.7 % և մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 2.3 %:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Վանաձոր	ք. Վանաձոր
Ալավերդի	ք. Ալավերդի
	գ. Ակներ
Ախթալա	ք. Ախթալա
	գ. Առողջարանին կից
Թումանյան	ք. Թումանյան
	գ. Զորեր կայարանի
Շամլուղ	ք. Շամլուղ
	գ. Ախթալա
	գ. Բենդիկ
Սպիտակ	ք. Սպիտակ
Ստեփանավան	ք. Ստեփանավան
	գ. Արմանիս
Տաշիր	ք. Տաշիր

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Ագարակ	Ագարակ
Ազնվածոր	Ազնվածոր
Աթան	Աթան
Աինիձոր	Աինիձոր
Ամրակից	Ամրակից
Այգեհատ	Այգեհատ
Անտառամուտ	Անտառամուտ
Անտառաշեն	Անտառաշեն
Ապավեն	Ապավեն
Արդվի	Արդվի
Արծնի	Արծնի
Արջուտ	Արջուտ
	Արջուտ կայարանին կից
Արևածագ	Արևածագ
Արևաշող	Արևաշող
Աքորի	Աքորի
Բագում	Բագում
Բլագոդարնոյե	Բլագոդարնոյե
Բովածոր	Բովածոր
Գարգառ	Գարգառ
Գեղասար	Գեղասար
Գյուլագարակ	Գյուլագարակ
Գոգարան	Գոգարան
Գուգարք	Գուգարք
Դաշտադեմ	Դաշտադեմ
Դարպաս	Դարպաս
Դեբետ	Դեբետ
Դսեղ	Դսեղ
Եղեգնուտ	Եղեգնուտ
Թեղուտ	Թեղուտ
Լեջան	Լեջան
Լեռնահովիտ	Լեռնահովիտ
Լեռնանցք	Լեռնանցք
Լեռնապատ	Լեռնապատ
Լեռնավան	Լեռնավան
Լերմոնտով	Լերմոնտով
Լոռի բերդ	Լոռի բերդ
Լորուտ	Լորուտ
Լուսադբյուր	Լուսադբյուր
Խնկոյան	Խնկոյան
Ծաթեր	Ծաթեր
Ծաղկաբեր	Ծաղկաբեր
Ծաղկաշատ	Ծաղկաշատ
Կաթնադբյուր	Կաթնադբյուր
Կաթնաջուր	Կաթնաջուր
Կաթնառատ	Կաթնառատ
Կաճաճկուտ	Կաճաճկուտ
Կարմիր Աղեգ	Կարմիր Աղեգ
Կողես	Կողես
Կուրթան	Կուրթան

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Հագվի	Հագվի
Հալավար	Հալավար
	Գյուլլուդարա
	Հայդարլի
	Քիլիսա
Հաղպատ	Հաղպատ
Հարթագյուղ	Հարթագյուղ
Հոբարձ	Հոբարձ
Հովնանաձոր	Հովնանաձոր
Ձյունաշող	Ձյունաշող
Ձորագետ	Ձորագետ
Ձորագյուղ	Ձորագյուղ
Ձորամուտ	Ձորամուտ
	Գոգավան
Գուրսալ	Գուրսալ
Ծոճկան	Ծոճկան
Մարգահովիտ	Մարգահովիտ
Մարց	Մարց
Մեղովկա	Մեղովկա
	Կրուգլայա շիշկա
Մեծ Այրում	Մեծ Այրում
	Փոքր Այրում
Մեծավան	Մեծավան
Մեծ Պառնի	Մեծ Պառնի
Մեղվահովիտ	Մեղվահովիտ
	Նորամուտ
Միխայելովկա	Միխայելովկա
Մղարթ	Մղարթ
Յաղդան	Յաղդան
Նեղոց	Նեղոց
Նովոսելցովո	Նովոսելցովո
Նորաշեն	Նորաշեն
Նոր Խաչակապ	Նոր Խաչակապ
Շահումյան	Շահումյան
Շամուտ	Շամուտ
Շենավան	Շենավան
Շիրակամուտ	Շիրակամուտ
Շնող	Շնող
Չկալով	Չկալով
Պաղաղբյուր	Պաղաղբյուր
Պետրովկա	Պետրովկա
Պրիվոլնոյե	Պրիվոլնոյե
Պուշկինո	Պուշկինո
Ջիլիզա	Ջիլիզա
Ջրաշեն	Ջրաշեն
Սարալանջ	Սարալանջ
Սարահարթ	Սարահարթ
Սարամեջ	Սարամեջ
Սարատովկա	Սարատովկա
	Գետավան
Սարչապետ	Սարչապետ
Սվերդլով	Սվերդլով

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Վահագնաձոր	Վահագնաձոր
Վահագնի	Վահագնի
Վարդաբլուր	Վարդաբլուր
Ուռուտ	Ուռուտ
Ուրասար	Ուրասար
Փամբակ	Փամբակ
	Փամբակ կայարանին կից
Քարաբերդ	Քարաբերդ
Քարաձոր	Քարաձոր
Քարինջ	Քարինջ
Քարկոփ	Քարկոփ
Օձուն	Օձուն
	Ամոց
Ֆիդլետովո	Ֆիդլետովո



Եկեղեցի Մայիտակ քաղաքում



Մանախինի վանական համալիր

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ
ԼՈՌՈՒՒ ՄԱՐԶԻ 10 000 ԲՆԱԿՉԻ ՀԱՇՎՈՎ, 2003Թ.**

	Ընդամենը	նրանցից	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	10 000	5107	4893
Ծնվածներ	122	62	60
Մահացածներ	95	49	46
Ամուսնություններ	51	X	X
Ամուսնալուծություններ	4	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	22.2	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	124	63	61
հանրակրթական	1519	776	743
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	83	42	41
միջին մասնագիտական	96	49	47
բարձրագույն մասնագիտական	135	69	66
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	18
Մարզիկներ, մարդ	145	74	71
Զբաղվածներ, մարդ	3420
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	130	66	64
բժիշկներ	18
կրտսեր բուժանձնակազմ	41
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված), մարդ	766	391	375
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդհանուր կենսաթոշակատուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	2008
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	1107	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	22886
թատրոն	429
համերգ	-	-	-
թանգարան	285
Իրավական ոլորտ			
հայտնաբերված վարչական իրավախախտումների քանակը տարվա ընթացքում	168	X	X
անձանց թվաքանակը, որոնց նկատմամբ կայացվել են վարչական իրավախախտումներով պայմանավորված վճիռներ, մարդ	173
հանցագործության դեպքերի քանակը տարվա ընթացքում	37	X	X



Օձունի տաճար (XI դար)



Հաղպատի վանքի տեսարան



Հնեվանք (XII – XIII դար)